ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 7 - 8 (16096) ՇԱԲԱԹ, 2 ՓԵՏՐՎԱՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանում էր գտնվում Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջանի Բուկիկիոն: Այցի շրջանակներում բարձրաստիճան հյուրը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու, վարչապետ Բիձինա Իվանիշվիլու, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ: Նա հանդիպում ունեցավ նաեւ Արդարադատության խորհրդի անդամների հետ:

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, Ղվարելիում գտնվող իր կալվածքում Ջանի Բուկիկիոյի հետ հանդիպմանը, քննարկեց երկրում առկա քաղաքական գործընթացները, պլանավորված սահմանադրական փոփոխությունները:

Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջանի Բուկիկիոյի հետ հանդիպումից հետո Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց. «Ջանի Բեկեկիոն համակարծիք եղավ մեզ հետ, որ իշխանության բոլոր ճյուղերի լիազորությունները պետք է լինեն հավասարակշռված»:

Ինքը՝ Բուկիկիոն նշեց, որ անհրաժեշտ է սահմանափակել առանց խորհրդարանի հետ համաձայնության կառավարությունը ցրելու նախագահի իրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒՅ

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսյանը, որը քվեարկվելու է երկրորդ ժամկետի համար, հանդես գալով Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում ընտրողների առջեւ, կարեւորել է Հայաստանի ու Վրաստանի միջեւ երկաթուղու բացումը:

Թեկնածուն ընդգծել է, որ տվյալ հարցի կապակցությամբ կողմերի միջեւ գոյություն ուներ միայն մի շարք տեխնիկական հարցեր:

«Այդ ճանապարհը կդառնա շատ արդյունավետ, նվազեցնելով ապրանքափոխադրումների ինքնարժեքը, ապահովելով երկաթուղային հաղորդակցություն ոչ միայն Ռուսաստանի, այլեւ ԱՊՀ մյուս երկրների հետ: Կարծում եմ, որ այդ նախագծից մեր ակնկալումները միանգամայն իրական են: Վերջերս, երբ Հայաստանում էր գտնվում Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, հայտարարեց, որ իր կառավարությունը շատ կարեւոր է համարում հաղորդակցության վերականգնումն այդ երթուղիով: Առկա են մի շարք տեխնիկական հարցեր, որոնց ուղղությամբ մենք աշխատում ենք»,- Սերժ Սարգսյանի խոսքերը մեջբերում է News.am.-ը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԼԻՆԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ»

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովում լրագրողներին հայտարարել է, որ մասնավոր սեփականությունը Վրաստանում կլինի անձեռնմխելի:

Վարչապետը, «ռուսական նախաճաշի» ժամանակ, ռուս գործարարներին ասել է՝ թեեւ Վրաստանը բիզնեսով զբաղվելու դյուրինության առումով աշխարհում գրավում է իններորդ տեղը, սակայն դա մեծ նշանակություն չունի, քանի որ բացակայում են ներդրումները:

«Ես վերլուծել եմ այդ հանգամանքը, խոսել՝ թե' դրական, թե' բացասական կողմերի մասին: Ես շեշտադրել եմ, որ շատ բան ստեղծված է արհեստականորեն: Համոզել եմ, որ, չնայած իններորդ տեղին, ներդրումներ Վրաստանում չեն եղել եւ այդ իններորդ տեղը վճռական չէ: Այն, որ մեկ ամսում կարելի է ստեղծել ընկերություն կամ մաքսային գործընթացներն արագորեն անցնել, ոչինչ չի նշանակում եւ ոչինչ չի որոշում: Բացակայում է գլխավոր հանգամանքը՝ մասնավոր սեփականության պաշտպանությունը: Մենք հավանաբար կկորցնենք իններորդ տեղը, սակայն ներդրումներ կլինեն: Անհրաժեշտ է պաշտպանել մրցակցության միջավայրը եւ մենաշնորհներ չպետք է լինեն»,- ընդգծեց Իվանիշվիլին:

Նա նշեց, որ «ռուսական նախաճաշն» անցավ ջերմ մթնոլորտում, եւ ինքն արժանացավ բուռն ծափահարությունների:

«Նման բան չէր եղել, ասացին նրանք ինձ»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐ

Հունվարի 31-ին Թբիլիսիում երկու երկրների արտաքին գործերի փոխնախարարների մակարդակով տեղի են ունեցել վրաց-հայկական քաղաքական կոնսուլտացիաներ:

Վրաստանի ԱԳ փոխնախարար Դավիթ Ջալաղանիայի եւ Հայաստանի ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանի գլխավորությամբ ընթացող խորհրդակցությունների ժամանակ կողմերն անդրադարձան երկկողմ հարաբերությունների արդիական հարցերին, մասնավորապես՝ երկկողմ քաղաքական, տնտեսական, մշակութային համագործակցության եւ սահմանազատման ու սահմանագծման խնդիրներին:

Միջգերատեսչական խորհրդակցությունների ժամանակ քննարկումներ կայացան նաեւ երկու երկրների միջեւ իրավապայմանագրային դաշտի, ԵՄ հետ հարաբերությունների եւ միջազգային կազմակերպությունների կազմակերպության եւ այլ ետխորհրդային միավորումների անդամ»,- նշել է Բարամիձեն:

Մեկնաբանելով խորհրդարանական փոքրամասնության երկրի արտաքին քաղաքական կուրսի անփոփոխության մասին օրենք ընդունելու վերաբերյալ նախաձեռնությունը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարել է, որ բարձրագույն օրենսդիր մարմնում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԿՄՇԱԿՎԻ «ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՍԻ ԱՆՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

«Միասնական ազգային շարժումը» խորհրդարանական մեծամասնությանն առաջարկում է համատեղ նախապատրաստել սահմանադրական ուղղումների նախագիծը եվրատլանտյան կուրսի անփոփոխության մասին: «Վրաստանի կուրսի անփոփոխության մասին» օրինագիծ ընդունելու նախաձեռնությամբ հանդես են եկել խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաձեն եւ խորհրդարանի փոխխոսնակ Գիորգի Բարամիձեն:

Ինչպես նշել է Գիորգի Բարամիձեն, խոսքը վերաբերում է երկրի կուրսի անփոփոխությանը ռազմավարական հարցերում: «Օրինագիծը բովանդակում է երեք հիմնատարր՝ մեր կուրսի անվտանգությունը ՆԱՏՕ եւ ԵՄ ընդունվելու կապակցությամբ, օկուպացված տարածքները չճանաչելու քաղաքականությունը, եւ երրորդ՝ Վրաստանը չի դառնա ԱՊՀ-ի, Եվրասիական Միության, այսպես կոչված անվտանգության կոլեկտիվ համաձայնագրի կազմակերպության եւ այլ ետխորհրդային միավորումների անդամ»,- նշել է Բարամիձեն:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ՄՈՍԿՎԱ

ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ Է

Ռուսաստանի հետ առեւտրական հարաբերությունների վերականգնման բանակցություններ վարելու նպատակով, վրացական պատվիրակությունը փետրվարի 3-ին կմեկնի Մոսկվա:

Այս մասին հաղորդել է Գինու ազգային գործակալության նախագահ Լեւան Դավիթաշվիլին:

Նա հաղորդել է, որ վիզաներ ստանալու հետ կապված տեխնիկական հիմնախնդիրն արդեն լուծված է, եւ Վրաստանում Շվեյցարիայի դեսպանությունում ռուսական հատվածն արդեն դրանք հանձնել է:

Այցի շրջանակներում կլինի հանդիպում Ռուսաստանի գլխավոր սանիտարական բժիշկ Գենադի Օնիշչենկոյի եւ այլոց հետ: Դավիթաշվիլին նշել է, որ Օնիշչենկոյի հետ հանդիպումը կկրի տեխնիկական բնույթ:

«Հանդիպումներ կլինեն երկու-երեք օր, իսկ բանակցությունները կկայանան մի քանի փուլով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հունվարի 29-ին կայացավ Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Կախի Կալաձեի հանդիպումը Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանի հետ:

Հանդիպմանը Հովհաննես Մանուկյանը Կախի Կալաձեին շնորհավորեց պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, եւ հույս հայտնեց, որ երկու երկրների գործընկերային հարաբերությունները այսուհետեւ եւս կպահպանեն ձեւավորված բարձր մակարդակը: Վրաստանի փոխվարչապետը շնորհակալություն հայտնեց բարեմաղթանքների համար եւ նշեց, որ վրաց-հայկական փոխադարձ համագործակցությունը էներգետիկայի բնագավառում երկկողմ հարաբերությունների կարեւոր ուղղություններից է եւ պատրաստակամություն հայտնեց՝ շարունակել համագործակցությունը հայկական կողմի հետ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վունքը:

«Մենք քննարկեցինք սահմանադրական փոփոխություններին առնչված հարցեր եւ շատ հարցերում եկանք համաձայնության»,- ասաց Իվանիշվիլին:

Վենետիկի հանձնաժողովի նախագահի հետ հանդիպում ունեցավ նաեւ խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին: Վերջինս նշել է, որ հանձնաժողովը լավ է հասկանում, թե ինչու անհրաժեշտ եղավ շտապ կարգով ընդունել օրենք համաներման մասին: «Համոզված եմ, որ երբ ժամանեն համապատասխան փորձագետներ, ապա նրանց բոլոր հարցերին կտրվեն պատասխաններ»,- հայտարարեց Ուսուփաշվիլին:

Վրաստան կատարած երկօրյա այցի արդյունքներին նվիրված մամլո ասուլիսում Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջանի Բուկիկիոն հայտարարեց, որ Վրաստանում պետք է գոյություն ունենա բոլոր ազդեցություններից ազատ եւ անկախ Արդարադատության խորհուրդ:

«Դա պետք է լինի դատավորների ինքնակառավարվող մարմին եւ նրա անդամները պետք է լինեն անկախ, ինչպես որ ինքը՝ դատավորը: Կարծում եմ, որ Խորհրդում, բացի դատավորներից, պետք է լինեն նաեւ գիտնականներ, իրավաբաններ, հասարակայնության ներկայացուցիչներ եւ ոչ մեծ թվով քաղաքագետներ ու չինովնիկներ»,- ընդգծեց նա:

Բուկիկիոն գտնում է, որ Խորհրդի անդամները պետք է ընտրվեն գաղտնի քվեարկությամբ, եւ դատավորները չպետք է հետ կանչվեն այնքան ժամանակ, մինչեւ որ կլրանան նրանց լիազորությունները:

«Նրանք կարող են վաղաժամկետ հետ կանչվել Խորհրդից միայն այն դեպքում, եթե նրանց որակավորումը եւ ընտրվելու նպատակը հայտնվում են հարցի տակ»:

Բուկիկիոն գտնում է, որ Վրաստանի նոր իշխանությունները տվեցին շատ խոստումներ, ուստիեւ համաներումը եղավ «խոստումների կատարման ժեստ»: Միաժամանակ նա նշեց, որ շատ երկրներում, իհարկե, ընտրություններից հետո ընդունվում են այդպիսի համաներումներ, սակայն դրանք չպետք է վերաբերեն ծանր հանցագործություններին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԿՄՇԱԿՎԻ «ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՍԻ ԱՆՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

արդեն սկսել է աշխատել արտաքին կապերի կոմիտեն:

Ուսուփաշվիլին նշել է, որ արտաքին կապերի կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն գրավոր դիմումներ է ուղարկել բոլոր քաղաքական կուսակցություններին եւ խմբակցություններին, կոչ անելով աշխատել միջխմբակցային համաձայնագիր կազմելու ուղղությամբ:

«Այդ գործընթացն արդեն սկսվել է: Եթե Ազգային շարժումը պատրաստ է մասնակցել դրան, մենք միայն ողջունում ենք այդ: Դա կարվի օրենքի, բանաձեւի կամ համաձայնագրի ձեւով: Գլխավորն այն է, որ մենք մշակենք մեր երկրի պետական շահերի երկարաժամկետ ռազմավարություն: Ոչինչ չի ստացվի, եթե ռազմավարությունը, առավել եւս արտաքին քաղաքական կուրսը փոխվի յուրաքանչյուր չորս տարի»,- ասել է Ուսուփաշվիլին:

Նշենք, որ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, հաշվի առնելով վերջին քաղաքական իրադարձությունները, կարեւոր է համարել Վրաստանի Սահմանադրությունում փոփոխությունների իրականացումը, ինչի մասին առաջարկությամբ հանդես է եկել իր կուսակցությունը՝ «Միասնական ազգային շարժումը»:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՄ

ՆԱԽԱԳԾԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Տասնհինգ վրացական եւ եվրոպական ոչ կառավարական կազմակերպություններ ընտրվել են՝ Վրաստանում ԵՄ նախագծերն իրականացնելու համար:

Այդ նախագծերի նպատակն է ամրապնդել քաղաքական հասարակության դերը մարդու իրավունքների եւ ժողովրդավարական բարեփոխումների առաջընթացի գործում, աջակցել օրենքի գերակայությանը եւ համապատասխան կառավարմանը:

Այդ նպատակով հատկացվել է 1,34 միլիոն եվրո: Տասնհինգ կազմակերպությունները կիրականացնեն նախագծեր, որոնց բյուջեները կկազմեն 52 հազարից մինչեւ 100 հազար եվրո: Դրանց առաջնային ուղղությունը կլինի բնակչության խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը (ներառյալ՝ ներքին վերաբնակեցված անձինք, էթնիկական, կրոնական եւ մյուս փոքրամասնությունները, երեխաները, կանայք, սահմանափակ հնարավորություններով անձինք): Նախագծերի նպատակն է պաշտպանել նաեւ նրանց առողջությունը, տնտեսական, սոցիալական, մշակութային, աշխատանքային իրավունքները, նպաստել նրանց սոցիալական ինտեգրմանը:

ԵՄ Ժողովրդավարության աջակցության եւ մարդու իրավունքների եվրոպական մեխանիզը ստեղծվել է 1994 թվականին, Եվրախորհրդարանի նախաձեռնությամբ, որը ֆինանսավորում է ԵՄ ոչ անդամ երկրներում իրականացվող վերոնշյալ նախագծերի ֆինանսավորումը:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ՄՈՍԿՎԱ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Չի բացառվում, որ այդ հանդիպումներից հետո ռուսական կողմը կունենա Վրաստան այցելելու ցանկություն, ինչը մենք կողջունենք»,- հայտարարել է Դավիթաշվիլին:

Վրաստանի համար Ռուսաստանի հետ հարաբերություններում ամենաառաջնայինը «Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումն է»: Այս մասին BBC-ին տված հարցազրույցում հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին: «Միայն դրանից հետո կլինեն բարեկամական հարաբերություններ մեր ամենամեծ հարեւանի հետ»,- ասել է Իվանիշվիլին:

Վերջին շրջանում Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ սկսվել են դիվանագիտական բանակցություններ, որոնք տեղի են ունեցել Ժնեւում եւ Մոսկվայում, իսկ Դավոսում կայացել է երկու երկրների վարչապետերի՝ Իվանիշվիլու եւ Դմիտրի Մեդվեդեւի ոչ պաշտոնական հանդիպումը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ձեւավորված սերտ գործընկերային ոգուն համապատասխան: Զրուցակիցները քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ համագործակցության եւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք խնդիրներ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանային եւ Վրաստանի ներքաղաքական իրավիճակին առնչվող հարցեր:

Հանդիպման կողմերը միասնական կարծիք արձանագրեցին երկու պետությունների միջեւ առկա համագործակցությունն առավել ընդլայնելու անհրաժեշտության մասին:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Կառավարությունը կազմել է ինն անդամներից բաղկացած հանձնաժողով, որի նպատակը է աջակցել Վրաստանում կրթություն ստանալու ցանկություն ունեցող օտարերկրացիներին:

Հանձնաժողովը ղեկավարում է փոխարտգործնախարար Դավիթ Ջալաղանիան: Հանձնաժողովի կազմում են՝ ԱԳՆ Ասիայի, Աֆրիկայի, Ավստրալիայի եւ Օկեանիայի երկրների դեպարտամենտի տնօրեն Էկա Ակոբիան, Ամերիկայի դեպարտամենտի տնօրեն Դավիթ Չոչուան, միջազգային կազմակերպությունների դեպարտամենտի տնօրեն Ջաբա Դեւդարիանին, կառավարության գրասենյակի ֆինանսական դեպարտամենտի ղեկավար Գայոզ Թալակվաձեն, կրթության փոխնախարար Դավիթ Զուրաբիշվիլին, կրթության նախարարության միջազգային հարաբերությունների ծրագրերի դեպարտամենտի ղեկավար Նատո Ջավախիշվիլին, ֆինանսների փոխնախարար Դավիթ Լեժավան, ՆԳՆ վարչական դեպարտամենտի տնօրեն Թամար Թալիաշվիլին:

Հանձնաժողովի կանոնադրության համապատասխան, նրա հիմնական խնդիրներն են. Վրաստանում սովորելու ընթացքում օտարերկրյա քաղաքացիներին պետության կողմից ֆինանսավորվող կրթաթոշակների եւ կրթաթոշակներ շնորհելու համար անհրաժեշտ միջոցառումների մշակումը, օտարերկրյա ուսանողների հետ հարաբերությունների դյուրինացման նպատակով բուհերում իրականացվելիք միջոցառումների մշակումը, օրենսդրական ակտերի նախագծերի նախապատրաստումը:



ԱՄՆ

ՋՈՆ ՔԵՐԻՆ՝ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՄՆ-ի Կոնգրեսի վերին պալատը՝ Սենատը, հունվարի 29-ին ձայների ճնշող մեծամասնությամբ հավանություն է տվել պետդեպարտամենտի ղեկավարի պաշտոնում Ջոն Քերիի թեկնածությանը: Քերիի օգտին քվեարկել է 94 սենատոր, դեմ՝ միայն երեքը:

Ավելի վաղ ԱՄՆ Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեն միաձայն պաշտպանել էր Ջոն Քերիի թեկնածությունը ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնում:

ԱՄՆ Հայ դատի գրասենյակը ողջունել է Բարաք Օբամայի՝ հայամետ սենատոր Ջոն Քերիի թեկնածությունը երկրի պետքարտուղարի պաշտոնում առաջադրելու մասին որոշումը եւ հիշեցրել՝ Ջոն Քերին շուրջ 3 տասնամյակ աջակցել է ամերիկահայ համայնքին՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության առնչվող հարցերում:

ԻՍՐԱՅԵԼ

ՌՄԲԱԿՈԾՎԵԼ Է ՍԻՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Իսրայելական օդային ուժերը հունվարի 30-ի գիշերը ռմբակոծել են սիրիա-լիբանանյան սահմանի շրջակայքը:

Լիբանանյան բանակը հայտարարել է, որ իսրայելական օդանավերը ողջ գիշեր թռիչքներ են կատարել Լիբանանի տարածքի վրայով:

Ավելի վաղ Իսրայելի վարչապետը հայտարարել էր, որ Սիրիայի կողմից քիմիական զենք օգտագործելու դեպքում Իսրայելը ռազմական միջամտություն կիրականացնի:

ԹՈՒՐՔԻԱ

ՆԱՏՕ-Ի PATRIOT-ՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ ԵՆ

Սիրիայից հնարավոր հրթիռային հարձակումներից պաշտպանվելու պատրվակով Թուրքիայի պահանջով ՆԱՏՕ-ից այդ երկիր բերված Patriot-ների՝ Մարաշում տեղակայված խմբաքանակն արդեն գործարկվել է:

Նշվում է, որ հակահրթիռային համակարգերի գործարկման մասին հայտնել է համակարգերի գերմանացի հրամանատար Մարկուս Էլերմանը՝ Մարաշի նահանգապետ Շուքրու Քոջաթեփեի հետ հանդիպման ժամանակ:

ԵԳԻՊՏՈՍ

ԵՐԿՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Եգիպտոսի նախագահ Մուհամմադ Մուրսին մեկ ամիս ժամկետով արտակարգ դրություն է հայտարարել երկրի երեք քաղաքներում՝ Պորտ Սայիդում, Սուեզում եւ Իսմաիլիայում:

Եգիպտոսում անկարգությունների ալիքը սկսվել էր Եգիպտոսի հեղափոխության երկրորդ տարելիցի օրվա նախօրեից՝ հունվարի 24-ին: Բախումները բուռն ընթացք էին ստացել Պորտ Սայիդում, որտեղ ֆուտբոլային հանդիպման ժամանակ տեղի ունեցած անկարգությունների զոհ էր դարձել 74 մարդ: Այդ կապակցությամբ Կահիրեի դատարանը որոշում էր կայացրել 21 անձանց, որոնք մեղադրվում էին անկարգություններ կազմակերպելու մեջ, մահապատժի ենթարկել:

ԲՐԱԶԻԼԻԱ

233 ՄԱՐԴ՝ ՀՐԴԵՀԻ ԶՈՀ

Բրազիլիայի նախագահ Դիլմա Ռոուսեֆը երկրում հայտարարել է եռօրյա սուգ՝ ի հիշատակ հունվարի 27-ին Սանտա Մարիա քաղաքի դիսկոտեկում բռնկված հրդեհի զոհերի:

Ողբերգությունը, որը 233 մարդու կյանք է խլել, տեղի է ունեցել Kiss ուսանողական դիսկոտեկում, հունվարի 27-ին: Այնտեղ ելույթ ունեցող մի երաժշտական խումբ, առանց անվտանգության կանոնները պահպանելու, իրականացրել է պայթուցիկային շոու:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ Է ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ



Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկը հաստատել է համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) աճի կանխատեսումը 2013 թվականի համար՝ 5 տոկոս:

Նշենք, որ այդ կանխատեսումը արվել է անցյալ տարվա հոկտեմբերին: Եվրոպական բանկը հաստատել է նաեւ Վրաստանում ՀՆԱ աճի կանխատեսումը 2012 թվականի արդյունքներով, որը կազմել է 6,5 տոկոս:

«Վրաստանի տնտեսությունը արագ տեմպերով էր աճում 2012 թվականի մեծ ժամանակաշրջանում: Այդուհանդերձ երեւան եկան որոշ նշաններ, որ այդ տեմպը կարող է դանդաղել ներդրումների հոսքի նվազեցման պատճառով»,- նշվում է բանկի տեսության մեջ: Եվրոպական բանկն ընդգծում է, որ «նոր իշխանությունների խնդիրը կդառնա ֆինանսավորման մասնավոր աղբյուրների ներգրավումը»:

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՐՑՈՎ

Տարածքային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը հայտարարել է ավելի քան 30 մրցույթ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 35 միլիոն լարի:

Այդ գերատեսչության փոխնախարար Շոթա Մալաշխիան նշել է, որ 2013 թվականին ենթակառույցային նախագծերի համար կծախսվի 180 միլիոն լարիից ավելի, քան՝ 2012 թվականին: Ընդ որում, նախարարությունը կապահովի բարձր մրցակցություն պլանավորված մրցույթներում: Ըստ փոխնախարարի, նախարարությունը երաշխավորում է, որ մրցույթներն ու հաղթողների բացահայտումը կլինեն հստակ ու շինարարական գործընթացի կարգավորումը չի ընթանա ուժային կառույցների մասնակցությամբ: Ուստի, նախարարությունն ընկերություններին կոչ է անում ակտիվորեն մասնակցել մրցույթներին:

Փոխնախարարը նշել է նաեւ, որ գերատեսչությունը իր կայք-էջում տեղադրել է 2013 թվականի համար պլանավորված նախագծերի ցուցակը:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարել է, որ Դավոս կատարած այցի արդյունքում, երկրորդ կիսամյակում ներդրողները Վրաստանին կդիմեն տարբեր նախագծերով:

Նա նշել է, որ Դավոսում կայացան շատ հետաքրքիր հանդիպումներ, գլխավորապես ներդրող հիմնադրամների, նաեւ «Ֆիլիպս» եւ «Ինտել» հայտնի ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումներում քննարկվել են տեխնոլոգիայի ոլորտին վերաբերող կոնկրետ նախագծեր, տարբեր առեւտրական հարաբերություններ եւ, ինչպես ասել է Կվիրիկաշվիլին, «մենք տարվա երկրորդ կեսին արդեն կտեսնենք տվյալ այցի իրական արդյունքները: Նախարարը նշել է, որ մի խումբ ներդրողներ հետաքրքրվել են մետալուրգիայի, զբոսաշրջության եւ այլ ոլորտներով:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՖԵՐՄԵՐՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ՎԱՈՒՉԵՐՆԵՐ

Կառավարության նիստի ավարտից հետո, գյուղատնտեսության նախարար Դավիթ Կիրվալիձեն հայտարարել է, որ գարնանային աշխատանքների կապակցությամբ ֆերմերները կստանան 300 լարիանոց վաուչերներ:

Միաժամանակ նա նշել է, որ մի քանի հեկտար հող ունեցող ֆերմերները կստանան ավելի խոշոր ֆինանսավորում:

Կիրվալիձեն պարզաբանել է, որ արդեն ավարտվել է գարնանային աշխատանքների նախապատրաստական շրջանը, եւ մոտ օրերս կկայանա այն հիմնադրամի շնորհանդեսը, որը կծառայի գյուղատնտեսության զարգացմանը, ուր հիմնական խնդիրը հողամասերի գրանցումն էր: Ընդհանուր առմամբ, գրանցվել է 800 հազար տեղամաս: Ծրագրին կմասնակցի մոտ 600 հազար մարդ, եւ նրանք կստանան վաուչերներ, եւ դրանք կօգտագործեն հողի մշակման համար: Այդ նպատակով հատկացվել է 600-700 միլիոն լարի:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՄԱՆԵՐՄԱՄԲ ԱԶԱՏՎԱԾՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

Ներում ստացող բանտարկյալների թիվը կարող է հասնել 5 հազարի: Առավելագույնս տասը օրից հետո, ով ստացել է ներում, կհեռանա ազատազրկման վայրից:

Այդ մասին հայտարարել է պատիժների կատարման, պայմանական դատապարտման եւ իրավաբանական օգնության նախարար Սոզար Սուբարին:

Նախարարը նշել է, որ համաներման արդյունքում արդեն ազատվել է ավելի քան 3 հազար մարդ, իսկ մյուսները բանտերից կհեռանան մոտ ապագայում:

«Գործընթացներն իրականացվում են արագ տեմպերով: Օրական ազատություն է ստանում մոտ 500 մարդ: Երբ ազատվեն նրանք, ում վերաբերել է համաներումը, դատարանները ձեռնամուխ կլինեն այն անձանց գործերի քննարկմանը, ում համար մեղմացվել է դատավճիռը»,- նշել է Սուբարին:

Հիշեցնենք՝ ավելի վաղ հաղորդվել էր, որ «Համաներման մասին» օրենքի կիրարկումից հետո բանտերից կազատվի մոտ 3 հազար կալանավոր:

ԲԱՆՏԵՐԻՑ ՎԵՐԱՑՎԵԼ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՍԱՐՔԵՐԸ

Ներքին գործերի նախարարի մամլո խոսնակ Գիորգոբիանին հաղորդել է, որ Վրաստանի ՆԳ նախարարությունը երկրի մի շարք բանտերից վերացրել է ապօրինի տեղակայված տեսա-լսասարքերը:

Նա ասել է, որ դրանք բանտախցիկներում տեղադրվել էին բանտարկյալների խոսակցությունները լսելու եւ գրանցելու, նրանց հետեւելու նպատակով:

ՆԳ նախարարության տվյալներով, այդ բոլոր սարքերը Թբիլիսիի, Բաթումիի, Զուգդիդիի եւ Քութաիսիի բանտերում ապօրինաբար տեղադրվել էին նորոգման աշխատանքների ընթացքում, 2006-2010 թվականներին:

Ներկայումս Ներքին գործերի նախարարությունը եւ դատախազությունը բացահայտում է այն անձանց, ովքեր գերազանցել են իրենց լիազորությունները եւ տեղադրել սարքեր՝ կալանավորներին չարտոնագրված հետեւելու համար:

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾԸ ՉԻ ՎԵՐԱՆԱՅՎԻ, ԵՎ ՆԱ ՉԻ ՃԱՆԱՉՎԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ



Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարել է, որ 2005 թվականի մայիսի 10-ին, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի դեմ ահաբեկչության փորձի համար դատապարտված Վլադիմիր Հարությունյանի գործը չի վերանայվի:

Ծուլուկիանին ասել է, որ ինքը Սոզար Սուբարիի հետ ակտիվորեն համագործակցում է Միացյալ Նահանգների հետ, որպեսզի Հարությունյանը մինչեւ վերջ պատիժը կրի արդարացի պայմաններում:

«Ես չեմ կարծում, որ, ելնելով այսօր առկա հանգամանքներից, այդ գործը վերանայման կարիք ունի»,- նշել է արդարադատության նախարարը: Ինչ վերաբերում է քաղբանտարկյալների նոր ցուցակ կազմելուն, ապա, ինչպես ասել է նա, գործադիր իշխանությունը տվյալ հանգամանքին դեռեւս չի մասնակցում: Հիշեցնենք, որ Հարությունյանի մայրը պահանջել է իր որդուն ճանաչել քաղբանտարկյալ: Ըստ Ժաննա Հարությունյանի, իր որդին քաղաքական բանտարկյալ է, եւ ցմահ բանտարկությունն ապօրինի է:



ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻԿԱ ԵԼՈՒՅԹԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին այդ կարգավիճակով խորհրդարանի առջեւ վերջին անգամ հանդես կգա փետրվարի 6-ին:

Փետրվարի առաջին երեքշաբթի բացվում է ութերորդ գումարման խորհրդարանի գարնանային նստաշրջանը: Նրան հարկ կլինի խորհրդարանում առաջին անգամ հանդես գալ այնպիսի պայմաններում, երբ իր կուսակցությունը՝ Միասնական ազգային շարժումը, կազմում է փոքրամասնություն:

Ըստ ավանդույթի, Վրաստանի նախագահը տարին մեկ անգամ հանդես է գալիս խորհրդարանում, մեկնաբանելով երկրում տեղ գտած կարեւորագույն իրադարձությունները: Դա կլինի նախագահի տասներորդ ելույթը օրենսդիր մարմնում:

ԱՎԵԼԱՑԱՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Վրաստանի հանրային դպրոցների բոլոր մանկավարժների աշխատավարձն ավելացել է 70 լարիով:

Կրթության փոխնախարար Թամար Սանիկիձեն հայտարարել է, որ դպրոցների վաուչերային ֆինանսավորման վերաբերյալ կառավարության որոշման մեջ արդեն կատարվել են փոփոխություններ: Հետեւաբար, բոլոր հանրային դպրոցների մանկավարժները հունվարի աշխատավարձը կստանան բարձրացման հաշվառմամբ:

Փոխնախարարը իրազեկել է նաեւ, որ այս տարի ուսուցիչների աշխատավարձի ավելացում այլեւս չի պլանավորվում: 2013 թվականի վերջին մանկավարժներին կտրվի, այսպես կոչված, 13-րդ աշխատավարձ: Բազային աշխատավարձը, որը կազմում է 243 լարի, տվյալ փուլում ավելանում է 70 լարիով»,- նշել է Թամար Սանիկիձեն:

ԱՎԵԼԱՑԵԼ Է ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հավաստում է, որ երկրում վերջին ժամանակաշրջանում ավելացել է փոքր եւ միջին գործարարության շրջանառությունը:

«2012 թվականի հունվարին Վրաստանում առեւտրական ցանցի շրջանառությունը կազմեց 650 միլիոն լարի: Իսկ ահա այս տարվա հունվարին, միայն 22 օրվա ընթացքում, ընդհանուր առեւտրական շրջանառությունը կազմել է 740 միլիոն լարի: Սա պաշտոնական տեղեկատվություն է»,- նշել է Խադուրին հեռուստատեսության Առաջին ալիքին տված հարցազրույցում: Նա հաղորդել է, որ առեւտրի ասպարեզում ամենամեծ շրջանառությունը գրանցվեց հուլիսին: Առեւտրական շրջանառության կրճատումներ նկատվեցին մենաշնորհված ոլորտում:

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ VIP ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն հայտարարել է, որ եթե հղի կինը ցանկանում է ծննդաբերել VIP պայմաններում, ապա դրա համար պետք է լրացուցիչ վճարել բազիսային ապահովագրային փաթեթ:

Նախարարը նշել է, որ ծննդաբերության ֆինանսավորումը կսկսվի այս տարվա հուլիսի 1-ից, ընդ որում՝ ոչ թե պետական ծրագրով, այլ բժշկական ապահովագրման փաթեթներով: Նախարարը նշել է նաեւ, որ Վրաստանում կվերականգնվի բուժկազմի վերապատրաստման համակարգը, եւ առողջապահության նախարարության առաջնահերթ խնդիրը բժիշկների ու բուժքույրերի որակավորման նկատմամբ հոգածությունն է:

ԿՐԹԱԿԱՆ

ԲՈՒՀԵՐՈՒՄ 14 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԴԱՌՆԱ ԱՆՎՃԱՐ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԻԱՆԱԼԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ է ԸՆՁԵՌՈՒՄ

Դեռեւս անցյալ տարվա վերջերին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հանդես եկավ բուհերում՝ բակալավրիատի մի քանի առաջատար ուղղությունների 14 մասնագիտությունների ուսուցումը անվճար դարձնելու նախաձեռնությամբ:

Ներկայացնելով կրթության գերատեսչության առաջարկությունը, կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլու խոսքերով, նախարարության նոր ղեկավարության կողմից 2013 թվականի բյուջեում ուսանողների գրանտային ֆինանսավորման համար նախատեսված գումարները ավելացվել է եւ, ընդհանուր առմամբ, հասցվել 10,2 միլիոն լարիի:

Նախարարության վերոնշյալ նախաձեռնությունը վերաբերում է հետեւյալ ուղղություններին եւ մասնագիտություններին՝ ագրարային գիտություններ, մասնագիտությունը՝ ագրոնոմիա, կրթական ուղղությունը՝ կրթական գիտություններ, ինժեներական ուղղությունը՝ էներգետիկա եւ էլեկտրաինժեներիա, շինարարություն, բնագիտական գիտություններ՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, սոցիալական գիտություններ՝ էկոնոմիկա, հումանիտար գիտություններ՝ հնագիտություն, պատմություն, վրաց բանասիրություն, փիլիսոփայություն, նաեւ ճարտարապետություն:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ ֆինանսավորումը կառնչվի այն բուհերի ուսանողներին, որտեղ վերոնշյալ ուղղություններով իրականացվում են դոկտորական ծրագրեր, թեպետ բանակցություններ են տարվում մյուս բուհերի հետ, եւ թե ֆինանսավորման ինչ հնարավորություններ կունենա նախարարությունը, այդ մասին հանրությանը կհաղորդվի լրացուցիչ տեղեկատվություն: Ներկա դրությամբ խոսքը վերաբերում է բարձրագույն ուսումնական յոթ հաստատությունների:

Նախարարությունում հայտարարեցին նաեւ, որ բոլոր այն բուհերը, որոնք կընդգրկվեն ֆինանսավորման վերոնշյալ ծրագրում, ընդունելության քննությունների ժամանակ ուսանողների համար կհայտարարեն բաց մրցույթ: «Այն ուսանողները, ովքեր քննություններին կստանան բարձր գնահատականներ, կընդգրկվեն անվճար ուսուցման ծրագրում, թեպետ կոնկրետ բուհում այդ ծրագրի կիրարկման համար պարտադիր պայմաններից է տվյալ մասնագիտությամբ բակալավրիատից բացի դոկտորական ծրագրերի առկայությունը, հակառակ դեպքում՝ անվճար ֆինանսավորումը չի իրականացվի»,- հայտարարեց նախարարը:

Ելնելով վերոնշյալ պահանջներից, անվճար ուսուցման ծրագրի իրականացման համար նախարարությունը ընտրել է յոթ համալսարաններ: Ընտրյալ բուհերի թվում են Թբիլիսիի պետական համալսարանը, Իլիայի անվան համալսարանը, Վրաստանի տեխնիկական համալսարանը, Սուխումիի պետական համալսարանը, Քութաիսիի եւ Բաթումիի պետական համալսարաններն ու Գորիի պետական համալսարանը:

Միաժամանակ կրթության եւ գիտության նախարարությունում նշեցին, որ վերոնշյալ յոթ համալսարաններով ծրագրի իրականացման շրջանակներում ներառվող բուհերի ցուցակը, ամենայն հավանականությամբ, կընդլայնվի: «Մյուս բուհերի հետ բանակցություններ են տարվում, եւ չի բացառվում, որ վերոնշյալ ցուցակը ընդլայնվի եւ մյուս բուհերն էլ հայտնվեն դրանում: Նախարարությունը մանրամասնորեն ուսումնասիրում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգը եւ մշակում է դրանցից յուրաքանչյուրի հետ համագործակցության նախագծերը: Բացառված չէ, որ առանձին փոփոխությունների կատարմամբ, առանձին ծրագրեր կիրարկվեն անմիջականորեն կոնկրետ բուհերի առնչությամբ»,- հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ նախարարության նախաձեռնությունը որոշակիորեն հավասարակշռում է լայն պահանջարկ վայելող եւ չվայելող մասնագիտությունների միջեւ, բացի այդ, շատ երիտասարդների բուհերում ուսումը շարունակելու հիանալի հնարավորություն է ընձեռվում:

Կրթության ոլորտի փորձագետների գնահատմամբ, ըստ երեւույթին, պետությունը ձեռնամուխ է եղել այն մասնագիտությունների ցանկի հստակեցմանը, որոնք առանձնակի անհրաժեշտ են երկրին, ուստիեւ ծագում է նոր կադրերի նախապատրաստման անհրաժեշտությունը: Միաժամանակ, փորձագետների գնահատմամբ, վերոնշյալ նախաձեռնությունը գործուն քայլ է բարձրագույն կրթության ոլորտում առկա իրավիճակի կարգավորման համար, այն է՝ յուրատեսակ հավասարակշռություն կհաստատվի որոշակիորեն պահանջարկ չվայելող ֆակուլտետների եւ առաջնահերթային այն ֆակուլտետների ու մասնագիտությունների միջեւ, որոնց պահանջարկը միշտ բարձր է եղել:

Ավելացնենք, որ կրթության եւ գիտության նախարարության հայտարարությամբ, վերոնշյալ ծրագրի վերաբերյալ քննարկումները շարունակվում են եւ համաձայնեցված փոփոխությունների մասին հանրությունը ժամանակին կտեղեկացվի:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ԵՆ

«Օրենսդրական բանբերում» հրապարակվել են Վրաստանի աշխատանքային օրենսգրքում կատարվելիք փոփոխությունները:



Վրաստանի արդարադատության նախարարության տեղեկատվությամբ, վերոնշյալ գերատեսչության նախապատրաստած օրինագիծը նախատեսում է փոփոխություններ աշխատանքային օրենսգրքում եւ արդեն մատչելի է բոլոր շահագրգիռ անձանց:

«www.matsne.gov.ge կայքի այցելուները գլխավոր էջում, «Օրինագծեր» պատուհանում, կարող են ծանոթանալ արդարադատության նախարարության նոր օրենսդրական նախաձեռնությանը, եւ հայտնել իրենց կարծիքն ու դիտողությունները: Հետաքրքիր առաջարկությունները հաշվի կառնվեն օրինագիծը մշակելիս»,- հայտարարել են արդարադատության նախարարությունից:

Վրաստանի աշխատանքային օրենսդրությունում կատարվելիք փոփոխությունների նախագծի շնորհանդեսը կայացավ հունվարի 22-ին: Միջոցառմանը հրավիրված էին գործադիր ու օրենսդիր իշխանությունների, բիզնես-հատվածի ոչ կառավարական կազմակերպությունների, արհմիությունների, միջազգային կազմակերպությունների եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:

Ինչպես հայտարարել են արդարադատության նախարարությունից, գործող աշխատանքային օրենսգրքում բոլորից առավել քննադատության է արժանի այն պարագան, որ գործատուն հնարավորություն ուներ առանց փաստարկման հեռացնել իր աշխատողին: Ինչպես նշել են այդ գերատեսչությունից, օրինագիծը նախատեսում է այդ դրույթի լրիվ փոփոխում: Փոխվում է նաեւ աշխատանքային պայմանագրի ձեւաչափը, իսկ այդ պայմանագիրը հիմնականում կրում էր բանավոր բնույթ, կարճաժամկետ էր եւ աշխատողին զրկում էր իր իրավունքները պաշտպանելու հնարավորություններից:

Անբավարար էին կարգավորված նաեւ կոլեկտիվ պայմանագրերի, աշխատանքային վեճերի լուսաբանման եւ սոցիալական գործընկերության հետ կապված հարցերը: Բացի դրանից, փաստորեն չէր վճարվում գերաժամկետ աշխատանքի համար եւ այլն: Այս եւ մյուս հարցերը, աշխատանքային օրենսդրության փոփոխությունների նախագծում, կարգավորվում են նորովի:

Արդարադատության նախարարությունը, ինչպես հայտարարել են գերատեսչությունից, փորձել է պահպանել բանական հավասարակշռություն գործատուի շահերի եւ աշխատողի իրավունքների միջեւ: Այն բանից հետո, երբ նոր աշխատանքային օրենսդրությունը կհամաձայնեցվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ, եւ կհաստատի խորհրդարանը, այն կապահովի ինչպես երկրի տնտեսության առաջընթաց զարգացումը, այնպես էլ՝ աշխատանքով զբաղված քաղաքացիների իրավունքները:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունվարի 24-ին համաներման օրենքով բանտից ազատ էր արձակվել ախալքալաքցի, «Միասնական Ձավախք» հասարակական կազմակերպության ղեկավար Վահագն Չախալյանը: Նա Վրաստանի դատարանի կողմից մեղավոր էր ճանաչվել Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասով՝ զենքզինամթերքի ձեռքբերման եւ պահպանման, 226-րդ հոդվածով՝ հանրային կարգը խախտող զանգվածային միջոցառումների կազմակերպման կամ ակտիվ մասնակցության, 239-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետով՝ խուլիգանություն՝ կատարված իշխանության ներկայացուցչի դեմ եւ ազատազրկվել 10 տարով:

Վ.Չախալյանին բանտարկել էին 2008թ. հուլիսի 21-ին, եւ արդեն կրել է պատժի մեկ չորրորդից ավելին, ինչն էլ հատուկ Վրաստանի խորհրդարանի հանձնաժողովին հնարավորություն ընձեռեց նրան ընդգրկել համաներման արժանացածների ցուցակում: Նշենք, որ մինչ այդ Չախալյանի փաստաբանը հանձնաժողովին դիմել էր վերջինիս քաղբանտարկյալ ճանաչելու պահանջով, սակայն խորհրդարանական քննարկումների ընթացքում այդ պահանջը մերժվել էր:

Վահագն Չախալյանի ազատ արձակումը Թբիլիսիում բացասական արձագանք առաջացրեց՝ ինչպես նախկին կառավարող կուսակցության անդամների, այնպես էլ առանձին քաղաքական գործիչների եւ փորձագետների կողմից: Դրան արձագանքեց նաեւ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:

- Դա հակապետական քայլ էր, եւ համաներման է ենթարկվել ռուսական հետախուզության գլխավոր վարչության գործակալը, որն աշխատում է Վրաստանի եւ նրա ամբողջականության խարխլման ուղղությամբ,- ասել է Սաակաշվիլին՝ ընդգծելով, որ Չախալյանը աշխատում էր ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի համար:

Ապա նախագահն ընդգծեց, որ խոսքն այստեղ չի վերաբերում Չախալյանի էթնիկ պատկանելությանը, քանի որ մեր հայ քաղաքացիների մեծամասնությունը ազնվորեն ծառայում են մեր երկրին եւ պատրաստ են զոհաբերել իրենց կյանքը պետության համար:

Վերջում նախագահը շեշտեց, որ Չախալյանի ազատ արձակումը Վրաստանի համար վատ հետեւանքներ կունենա:

Գրեթե նմանատիպ հայտարարությամբ հանդես եկավ նաեւ «Միասնական ազգային շարժման» գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլին:

Սույն հայտարարությանն արձագանքել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմը:

Տարածված հաղորդագրության մեջ նշվում է, որ Վահագն Չախալյանը բանտից ազատ է արձակվել համաներման օրենքով, եւ այդ կապակցությամբ տարածվում են «անվայելուչ հայտարարություններ, փորձելով նպաստել հակահայկական տրամադրությունների տարածմանը Վրաստանի բազմազգ հասարակության շրջանում»: Հաղորդագրությունում արդարացիորեն նշված է, որ եթե համաձայն տարածված հայտարարության Վահագն Չախալյանը իբր անջատողական է եւ արտասահմանյան հատուկ ծառայությունների գործակալ, ապա ինչով կարելի է բացատրել այն, որ նա դատված չէր Քրեական Օրենսդրության համապատասխան հոդվածներով:

Անդրադառնալով նրան, որ Միխեիլ Սաակաշվիլին իր հայտարարության մեջ հիշատակել էր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը, հայտարարելով, որ ազատումը տեղի է ունեցել Նորին Սրբության խնդրանքով, Վիրահայոց թեմի հաղորդագրության մեջ ընդգծված է, որ նախ, Վեհափառի դիմումը բխում էր մարդասիրական գաղափարներից եւ Չախալյանի ծնողների խնդրանքով էր, ինչին չէր կարող չարձագանքել Համայն հայության Հոգեւոր հովիվը: Երկրորդ՝ Չախալյանն այսպես թե այնպես ընկնում էր համաներման տակ, քանզի նա դատապարտված էր այն հոդվածներով, որոնք համապատասխանում են Վրաստանի 2013 թվականի հունվարի 12-ի «Համաներման մասին» օրենքին: